

ՄԱՐԳԻՍ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տարբեր երկրներում թեկնածուին ներկայացվող պահանջները տարբեր են: Այդպիսի պահանջներ են հանդիսանում թեկնածուի տարիքը, քաղաքացիությունը, մշտական բնակությունը, ընտրական գրավի մուծումը, ստորագրությունների հավաքագրումը և այլն:

1) Տարիք: Թեկնածուներին ներկայացվող պահանջներից է հանդիսանում տարիքը: Հայաստանի Հանրապետությունում սահմանված են տարիքային հետևյալ ցեղերը՝ նախագահի համար 35 տարեկան, պատգամավորի և համայնքի ղեկավարի համար՝ 25, ավագանու անդամի համար՝ 21 տարեկան: Ընդհանուր առմամբ, նշված տարիքային ցեղերը ընդունելի են՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձը:

2) Քաղաքացիություն: Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիության պահանջ է սահմանված ՀՀ Նախագահի (10 տարվա) և պատգամավորների թեկնածուների համար (5 տարի):

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում թեկնածուների համար քաղաքացիություն չի պահանջվում, ինչը համապատասխանում է միջազգային չափանիշներին:

«Հետևելով նույն փաստարկներին, որով ոչ քաղաքացիներին տրվում է ընտրելու իրավունք տեղական ընտրություններին՝ առաջարկվում է, որ տեղական ընտրություններին թեկնածու լինելու իրավունք հնարավորության դեպքում տրվի երկար ժամանակ բնակվող օտարերկրյա ռեզիդենտներին»¹:

Քաղաքացիության պահանջի հետ կապված բավական լուրջ խնդիր է հանդիսանում երկքաղաքացիություն ունեցող անձանց հարցը: ՀՀ ընտրական օրենսգրքի² համաձայն. «Հանրապետության Նախագահի և պատգամավորի թեկնածու չեն կարող առաջադրվել և գրանցվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն այլ պետության քաղաքացիություն» (65-րդ հոդված, 3-

րդ մաս և 97-րդ հոդված, 5-րդ մաս):

Կարծում ենք, տվյալ դրույթը արդարացված չէ: Նախ, երկքաղաքացիներին ավելի նվազ իրավունքներ տրամադրելը չի համապատասխանում միջազգային ընդունված չափանիշներին:

«Անհավասար ընտրական իրավունքի ստեղծումը հակասում է 1990 թվականի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի 7.3 կետում պարունակվող՝ քաղաքացիներին հավասար ընտրական իրավունքի ապահովման պարտավորությանը»³:

«Որպեսզի ժողովրդի կամքը հիմք ծառայի կառավարության իշխանության համար, մասնակից պետությունները ... երաշխավորում են չափահաս քաղաքացիների համար ընդհանուր և հավասար ընտրական իրավունք»⁴:

Երկքաղաքացիները հանդիսանում են ՀՀ լիիրավ քաղաքացիներ, և այն, որ ՀՀ քաղաքացի ունի նաև այլ երկրի քաղաքացիություն, որն ի դեպ թույլատրված է ՀՀ Սահմանադրությամբ (հոդված 30.1), չի կարող հիմք հանդիսանալ նրան որևէ իրավունքից զրկելու համար: Այն իրավունքը, որը անձին տրվում է քաղաքացիություն ունենալու ուժով (այլ լրացուցիչ պայմաններ չեն պահանջվում կամ անձը բավարարում է այդ պահանջներին) չի կարող սահմանափակվել երկքաղաքացիների համար, քանի որ երկքաղաքացին ամբողջապես բավարարում է քաղաքացիություն ունենալու պահանջը:

«Այն պահից, երբ երկքաղաքացիությունը ընդունվել է, քաղաքացիները ովքեր ունեն երկու երկրի քաղաքացիություն, չպետք է ունենան ավելի քիչ իրավունքներ, քան մյուսները, այդպիսի սահմանափակումները տարածված չեն»⁵:

Բացի այդ, ներկայիս օրենսդրական մեխանիզմները հնարավորություն չեն տալիս բոլոր թեկնածուների դեպքում հստակ պարզել, թե տվյալ անձը ունի արդյոք այլ երկրի քաղաքացիություն, թե՛ ոչ: Արդյունքում, հնարավոր է դառնում կիրառել տարբե-

www.lawinstitute.am

րակված մոտեցում, այսինքն, մեկ թեկնածուի դեքում ինչ-ինչ միջոցներով պարզել այլ երկրի քաղաքացիություն ունենալու փաստը, իսկ մյուսի դեպքում՝ ոչ:

«Ներկայումս ԸԴԱ-ին պարզ չէ, թե ինչպես կարելի է որոշել, արդյոք անձն ունի երկքաղաքացիություն, թե՛ ոչ: Որոշակի շփոթություն է առաջանում՝ կապված այս փոփոխությունների իրագործման հետ»⁶:

Այսպիսով, կարծում ենք, անհրաժեշտ է նշված սահմանափակումը հանել՝ երկքաղաքացիներին նույնպես հնարավորություն տալով այլ քաղաքացիների հետ համահավասար առաջադրվել որպես թեկնածու համապետական ընտրությունների ժամանակ:

3) Մշտական բնակություն: Թեկնածուներին ներկայացվող կարևոր պահանջներից է հանդիսանում որոշակի ժամկետում տվյալ երկրում մշտապես բնակված լինելու պահանջը: Տարբեր երկրներում այդ ժամկետը նույնպես տարբեր է:

Մշտական բնակության պահանջը նպատակ ունի ապահովել, որպեսզի թեկնածուները, ովքեր ապագայում պետք է զբաղեցնեն երկրի կարևորագույն պետական պաշտոնները, իրազեկ լինեն տվյալ երկրում տիրող քաղաքական և տնտեսական իրավիճակին, երկրում առկա խնդիրներին, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել պաշտոնական պարտականությունները:

ՀՀ Նախագահի թեկնածուների համար սահմանված է վերջին 10 տարում Հանրապետությունում մշտապես բնակվելու պահանջ, ՀՀ պատգամավորի թեկնածուների համար՝ վերջին 5 տարում, Երևանի ավագանու թեկնածուների համար՝ վերջին 3 տարում, համայնքի ղեկավարի և ավագանու թեկնածուների համար՝ առնվազն վերջին 2 տարվա հաշվառման պահանջ:

Մշտական բնակության պահանջը Հայաստանի ընտրական օրենսդրության համար եղել և մնում է խնդրահարույց հարցերից մեկը: Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ ընտրական օրենսգրքը օգտագործում են «մշտապես բնակվող» արտահայտությունը, սակայն ՀՀ օրենսդրությամբ այդ տերմինի հստակ սահմանում չի տրվում:

ՀՀ ընտրական օրենսգրքում ընդհանրապես բացակայում է այդ տերմինի սահմանումը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը սահմանում է միայն «բնակության վայր» հասկացությունը, մասնավորա-

պես դրա 23-րդ հոդվածի համաձայն. «Բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է»: Սակայն «բնակության վայր» արտահայտության սահմանումը չի կարող բավարար հիմք լինել «մշտապես բնակվել» հասկացության մեկնաբանման համար:

«Հայաստանի Հանրապետության տարածքում «մշտական բնակություն» ունենալու որոշակի ժամանակահատվածն ապացուցելու՝ թեկնածուներին ներկայացվող պահանջը միջազգային դիտորդների կողմից առավել ցայտուն կերպով ընդգծվեց որպես հիմնախնդիր 2003 թվականին, քանի որ բնակության հարցերը կանոնակարգող օրենքը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքը, ըստ էության, մնան հասկացություն չի պարունակում: Սույն մեկնաբանություններում հնարավոր չէ գնահատել, թե արդյոք ՀՀ ընտրական օրենսգրքը համահունչ է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին: Այնուհանդերձ, ցանկացած դեպքում շատ կարևոր է, որպեսզի «մշտական բնակության» հասկացությունը հստակորեն սահմանվի, եթե այն օգտագործվելու է որպես թեկնածուներին ներկայացվող պահանջ»⁷:

Այլ օրենսդրական ակտերով նույնպես չի սահմանվում «մշտապես բնակվելու» հասկացության սահմանումը, այլ տրվում է միայն «մշտական բնակության վայր» հասկացության սահմանումը: Մասնավորապես, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Մշտական բնակության վայր (կացարան) է համարվում այն տարածքը, որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում և հայտարարում է որպես իր կացարան»⁸:

Նմանատիպ դրույթ է պարունակում նաև «Բնակչության պետական ռեգիստրի համակարգներում մասին» ՀՀ կառավարության որոշմամբ⁹ հաստատված «Բնակչության պետական ռեգիստրում անձանց անհատական հաշվառման կարգը»:

«Հայաստանի Հանրապետության անձնագրային համակարգի կանոնադրության»¹⁰ 23-րդ կետի համաձայն. «Մշտական բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ Հայաստանի Հանրապետության քաղաքացին բնակվում է մշտապես կամ առավելապես»:

Այսպիսով, նշված սահմանումները վերաբերվում են միայն մշտական բնակության վայրի՝ որպես կացարանի սահմանմանը, իսկ ընտրական

օրենսգրքի իմաստով անհրաժեշտ է սահմանել, թե տվյալ տարածքում առնվազն որքան ժամանակ բնակվելն է համարվում մշտական բնակվել և ինչպես է այդ ժամանակը հաշվարկվում:

Այնինչ, այդ հասկացության հստակ սահմանման բացակայությունը գործնականում բազմաթիվ խնդիրներ է առաջացնում: Կարծում ենք, նշված խնդիրը հրատապ լուծման կարիք ունի, և անհրաժեշտ է օրենսգրքում հստակորեն սահմանել «մշտապես բնակվելու» պահանջի սահմանումը: Ընդ որում, այդ հասկացության սահմանումը պետք է տրվի այնպես, որպեսզի հետագայում հնարավոր լինի խուսափել դրա տարատեսակ մեկնաբանություններից: Մասնավորապես, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ անձը օբյեկտիվ պատճառներով կարող է որոշակի ժամանակով բացակայել երկրի տարածքից՝ չկտրելով կապը տվյալ երկրի հետ (արտերկրում բուժում ստանալու նպատակով և այլն):

Այսպիսով, կարծում ենք, անհրաժեշտ է օրենսգրքում տալ «մշտապես բնակվելու» հետևյալ սահմանումը՝ «Անձը համարվում է որոշակի ժամանակահատվածում ՀՀ-ում մշտապես բնակվող, եթե տվյալ ամբողջ ժամանակահատվածում հաշվառված է եղել Հայաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետությունից փաստացի չի բացակայել այդ ժամանակահատվածի մեծ մասը (ընդ որում՝ յուրաքանչյուր օրացուցային տարվա մեծ մասը), բացառությամբ տվյալ անձի կամքից անկախ բացառիկ անհրաժեշտ դեպքերի (բուժում, գործուղում և այլն)»:

Ընդ որում, անձի հաշվառված լինելու մասին տեղեկանքը պետք է բավարար լինի անձին որպես թեկնածու գրանցելու համար, եթե գրանցող մարմինն այլ բան չի ապացուցում:

4) Թեկնածուին ներկայացվող պահանջներից է հանդիսանում նաև ընտրողներից որոշակի թվով ստորագրությունների հավաքագրումը:

ՀՀ-ում ստորագրությունների հավաքագրման համակարգը գործում էր մինչ 2005թ.: Ներկայումս այդ համակարգը Հայաստանում չի կիրառվում: Այդ հանգամանքը կարելի է դիտարկել 2 տեսանկյունից: Մի կողմից դա արդարացված է, քանի որ ստորագրությունների հավաքագրումը ունի մի շարք թերություններ: Մասնավորապես՝ ստորագրությունների ճշտության ստուգման ընթացակարգը բավական բարդ է, ինչը գործնականում բազմաթիվ խնդիրներ է առաջացնում:

Այն կարող է չարաշահումների տեղիք տալ, քանի որ մի կուսակցության դեպքում կարող է ստորագրությունների ճշգրտման պրոցեսը դիտավորյալ կատարվի շատ մանրամասնորեն ու հետևողական, իսկ մյուս դեպքում՝ ավելի մակերեսայնորեն:

Ստորագրությունների հավաքագրման համակարգը հիմնականում պահանջում է ստորագրությունների հավաքագրում ողջ երկրի տարածքով՝ յուրաքանչյուր տարածքից համամասնորեն, իսկ դա կարող է խոչընդոտ հանդիսանալ այն թեկնածուների համար, որոնք ընդհանուր երկրի մակարդակով մեծ աջակցություն չունեն, սակայն զգալի աջակցություն ունեն կոնկրետ մեկ կամ մի քանի ընտրատարածքների ընտրողների կողմից:

Ստորագրությունների հավաքագրման և դրանց ճշտության ստուգման պրոցեսը բավական ժամանակատար գործընթաց է:

Ստորագրությունները հավաքագրվում են ընտրողներից ոչ գաղտնի կերպով, ինչը նույնպես մտահոգիչ է՝ հաշվի առնելով քվեարկության գաղտնիության ապահովման պահանջը:

Միևնույն ընտրողը ստորագրությունների հավաքագրման ժամանակ կարող է ստորագրություն տալ մեկից ավելի թեկնածուների օգտին, մինչդեռ քվեարկության ժամանակ վերջինս ունի միայն մեկ ձայնի իրավունք:

Ստորագրությունների հավաքագրման պահանջից հրաժարվելը ընդունելի է համարվել նաև միջազգային մասնագետների կողմից:

«Ստորագրությունների հավաքումը հանելը և միայն ընտրական գրավի կիրառումը ամբողջապես ընդունելի է: Սա կարող է բացառել շատ դժվարություններ կապված ստորագրությունների իսկության ստուգման հետ:»¹¹

Մյուս կողմից, սակայն, ստորագրությունների հավաքագրման պահանջը հանելը հնարավորություն է տալիս ընտրություններին մասնակցել այնպիսի անձանց, ովքեր չունեն ընտրողների լուրջ աջակցություն: Ստորագրությունների հավաքման պահանջն ինքնանպատակ չէ, այն նպատակ ունի կանխել ոչ մեծ աջակցություն վայելող «ոչ լուրջ թեկնածուների» մասնակցությունը ընտրություններին:

Փորձը ցույց է տալիս, որ ընտրություններին մասնակցած թեկնածուներից շատերը չեն հավաքում ընտրողների ձայների նույնիսկ 1 տոկոսը:

«2008 թվականի փետրվարի նախագահական ընտրություններին, 9 թեկնածուներից 4-ը ստա-

ցան 10.000 ձայնից կամ ձայների ընդհանուր թվի 1 տոկոսից պակաս ձայներ: Եթե որոշ փոքր աջակցությամբ թեկնածուներ մասնակցեն հաջորդ ընտրություններն, ապա կարելի է ստորագրությունների հավաքման պահանջը վերականգնելու պահանջը քննարկել: Նմանապես, կուսակցությունների կողմից թեկնածուների առաջադրման կանոնը պետք է նաև փոխվի, օրինակ, պահանջելով կուսակցություններից, որոնք չեն ստացել տեղեր նախորդ երկու պառլամենտական ընտրություններին, հավաքել ստորագրություններ ազգային ընտրություններին մասնակցելու համար:¹²

Մինչդեռ, ստորագրությունների հավաքագրումը կարող է կանխել շատ փոքր աջակցություն ունեցող թեկնածուների գրանցումը:

Այսպիսով, հաշվի առնելով ստորագրությունների հավաքագրման և՛ դրական, և՛ բացասական կողմերը, կարծում ենք, որոշակի դեպքերում կարելի է կիրառել ստորագրությունների հավաքագրում, մասնավորապես այն թեկնածուների համար ովքեր նախորդ երկու ընտրություններին չեն մասնակցել կամ մասնակցելու դեպքում ստացել են շատ չնչին ձայներ:

Այդ դեպքում հնարավոր կլինի կանխել փոքր աջակցությամբ «ոչ լուրջ» թեկնածուների գրանցումը՝ միաժամանակ անհարկի չժանրաբեռնելով արդեն իսկ որոշակի աջակցություն ունեցող թեկնածուներին ստորագրությունների հավաքագրման ժամանակատար պահանջով:

5) Ընտրական գրավը: Թեկնածուներին ներկայացվող պահանջներից է նաև ընտրական գրավի մուծումը, որը վերադարձվում է միայն թեկնածուի կողմից ձայների որոշակի տոկոսը հավաքելու դեպքում: Ըստ էության, այն նույնպես մի միջոց է, որը կանխում է ոչ լուրջ թեկնածուների գրանցումը, քանի որ այդպիսի թեկնածուներից որոշները, մտահոգ լինելով ընտրական գրավը կորցնելու հեռանկարով, չեն փորձի գրանցվել որպես թեկնածու:

Ընտրական գրավի պահանջը շատ ավելի պարզ է և հեշտ կիրառելի, քան ստորագրությունների հավաքման պահանջը: Սակայն, մյուս կողմից սույն պահանջը որևէ առնչություն չունի ընտրողների կողմից աջակցություն ունենալու հետ:

«Գործնականում նախընտրական գրավի համակարգը զերծ է ստորագրությունների հավաքագրման որոշակի անհարմարություններից (օրինակ, ժամանակատար գործընթացը ստորագրու-

թյունների հավաքագրման, ստորագրությունների ոչ գաղտնի լինելը և դրանց ստուգելու անհրաժեշտությունը): Այնուամենայնիվ, նախընտրական գրավի համակարգում առկա է մեկ թերություն: Համեմատած ստորագրությունների հավաքագրման համակարգում ընտրություններին մասնակցելու նպատակահարմարությունը կախվածության մեջ է դրվում գումարից, քան թե քաղաքական աջակցությունից»:¹³

Առավել հաճախ ընտրական գրավը և ստորագրությունների հավաքագրումը կիրառվում են գուգահեռաբար, ինչը, կարծում ենք, առավել ընդունելի տարբերակ է:

Հայաստանի Հանրապետությունում ընտրական գրավի հարցում, թերևս, միակ խնդիրը գրավի չափն է:

«Դրամական գրավը պետք է ունենա զգալի չափ, որպեսզի ծառայի որպես խոչընդոտ անլուրջ քաղաքական կուսակցությունների և անկախ թեկնածուների համար, սակայն, այն չպետք է լինի այնքան բարձր, որ կանխի լեգիտիմ քաղաքական կուսակցությունների և անկախ թեկնածուների գրանցման հնարավորությունը»:¹⁴

Ընտրական գրավի չափազանց մեծ լինելը ընդունելի չէ մի քանի հանգամանքներից ելնելով: Մասնավորապես, դա կարող է ազդել այն թեկնածուների վրա, ովքեր ունեն ժողովրդի մեծ աջակցություն (օրինակ, կարող են հավաքել ընտրողների մեծ թվով ստորագրություններ), սակայն հնարավորություն չունեն մուծելու ընտրական գրավը:

Բացի այդ գրավի չափազանց մեծ չափը հակասության մեջ է մտնում հավասարության սկզբունքի հետ: ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի համաձայն.

«Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված ... գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Խտրականության արգելումը ամրագրված է նաև բազմաթիվ միջազգային պայմանագրերում («Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» (հոդված 2), «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր» (հոդված 26), «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա» (հոդված 14) և այլն):

«Անհիմն բարձր ընտրական գրավը նաև խն-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դիր է ներկայացնում եվրոպական չափանիշների առումով: Ընդունված սկզբունք է, որ անարդար խտրականությունը ներառում է անձի նկատմամբ խտրականությունը կապված սոցիալական կամ ունեցվածքի վիճակից: Այսպիսով, ընտրական գրավի չափը պետք է քննարկել զգուշությամբ, ապահովելու համար, որ այն չկանխի լուրջ թեկնածուի առաջադրումը, ով տնտեսապես անապահով է¹⁵:

Ներկայումս, Հայաստանի Հանրապետությունում ընտրական գրավը կազմում է՝ ՀՀ Նախագահի թեկնածուի համար նվազագույն աշխատավարձի 8000-ապատիկը, ՀՀ ԱԺ համամասնական ընտրությունների թեկնածուների համար՝ 2500-ապատիկը, ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրությունների թեկնածուների համար՝ 1000-ապատիկը, Երևանի ավագանու թեկնածուների համար՝ 2000-ապատիկը, համայնքի ղեկավարի թեկնածուների համար՝ 5000 բնակչից քիչ համայնքներում 50-ապատիկը, իսկ 5000-ից ավել՝ 100-ապատիկը, ավագանին համապատասխանաբար՝ 10-ապատիկը և 20-ապատիկը:

Կարծում ենք՝ ընտրական գրավը հատկապես Նախագահի և Ազգային ժողովի մեծամասնական ընտրությունների դեպքում բավական բարձր է և չի համապատասխանում ՀՀ բնակչության սոցիալական վիճակին:

Բացի այդ, ընտրական գրավի մեծ չափը կարող է բացասաբար ազդել քիչ ֆինանսական միջոցներ ունեցող թեկնածուների նախընտրական հիմնադրամի վրա:

«Ճիշտ չէ, որ ընտրությունների ծախսերի մեծ մասը կազմի ընտրական գրավը»¹⁶:

Այս առումով ներկայումս առկա է բավական մեծ անհամամասնություն տարբեր ընտրովի մարմինների ընտրական գրավների և նախընտրական հիմնադրամի չափերի միջև: Մասնավորապես, նախագահի թեկնածուի դեպքում ընտրական գրավը կազմում է նախընտրական հիմնադրամի առավելագույն չափի (նվազագույն աշխատավարձի 70.000-ապատիկը) մոտ 11%-ը, Ազգային ժողովի համամասնական թեկնածուների դեպքում՝ նախընտրական հիմնադրամի առավելագույն չափի (նվազագույն աշխատավարձի 60.000-ապատիկը) 4%-ը, իսկ Ազգային ժողովի մեծամասնական թեկնածուի դեպքում՝ նախընտրական հիմնադրամի առավելագույն չափի (նվազագույն աշխատավարձի 5.000-ապատիկը) 20%-ը:

Կարծում ենք, անհրաժեշտ է կրճատել ընտրական գրավի չափը, ՀՀ Նախագահին դարձնելով նվազագույն աշխատավարձի 5000-ապատիկը, իսկ մեծամասնական թեկնածուին՝ 500-ապատիկը:

Ընտրական գրավը վերադարձվում է, եթե թեկնածուն ընտրությունների արդյունքում հավաքել է օրենքով սահմանված շեմից ավելի ձայներ: Տարբեր երկրներում այդ շեմը տարբեր է:

«Շեմը, որը պետք է հաղթահարել գրավի վերադարձման համար, նույնպես պետք է լինի խելամիտ»¹⁷:

ՀՀ-ում այդ շեմը ՀՀ Նախագահի, պատգամավորի (մեծամասնական), համայնքի ղեկավարի, ավագանու թեկնածուների դեպքում՝ 5 տոկոսն է, իսկ ՀՀ Ազգային ժողովի համամասնական և Երևանի ավագանու ընտրությունների դեպքում ընտրական գրավը վերադարձվում է այդ մարմիններում տեղերի բաշխմանը մասնակցելու դեպքում:

6) Հայտարարագիր ունեցվածքի մասին: Բացի վերոնշյալ պահանջներից, ՀՀ Նախագահի և ԱԺ պատգամավորության թեկնածուները պետք է ներկայացնեն նաև գույքի և եկամուտների հայտարարագիր:

ՀՀ ընտրական օրենսգրքի տարբեր հոդվածներում նշվում է, որ հայտարարագիրը ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով: Սակայն, նշված օրենքը 2009 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել (2006 թվականի օրենք, ՀՕ-164-Ն): Ներկայումս այդ հարաբերությունները կարգավորվում են «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքով (07.07.2006թ., ՀՕ-164-Ն): Ստացվում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքում հղում է կատարվում ուժը կորցրած իրավական ակտի, ինչն անթույլատրելի է: Ուստի անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել օրենսգրքում՝ հղում կատարելով արդեն վերոնշյալ օրենքին:

Բացի այդ, նշված օրենքում սահմանվում է, որ հայտարարագիր պետք է ներկայացնեն նաև փոխկապակցված անձինք (ընտանիքի անդամները): Սակայն այդ դեպքում խնդիրներ են առաջանում:

«Ավելին, պահանջը, որ պետք է հայտարարագրեն «ընտանիքի անդամների» ունեցվածքը,

խնդրահարույց է: Առաջին, ոչ մի իրավական սահմանում տրված չէ «ընտանիքի անդամի» համար: Երկրորդ, մտահոգիչ է, որ իրավական պատասխանատվություն կարող է առաջանալ թեկնածուի համար, եթե «ընտանիքի անդամը» թեկնածուին տակեղծ տեղեկություն «ընտանիքի անդամի» ունեցվածքի վերաբերյալ: Թեկնածուի իրավական պատասխանատվությունը ճիշտ չէ, քանի որ թեկնածուն չունի ոչ մի վերահսկողություն ուրիշ անձանց ունեցվածքի նկատմամբ և կարող է կատարել ազնիվ սխալ գնահատելով այլ անձի ունեցվածքը:»¹⁸

Հայտարարագիր ներկայացնելու հետ կապված նաև խնդիր է հանդիսանում այն հանգամանքը, թե արդյոք ինչպես է ԿԸՀ-ն ճշտելու այդ տվյալների համապատասխանության իրականությունը, քանի որ նման տվյալների ԿԸՀ-ն չի տիրապետում:

Այդպիսի տվյալների կարող են տիրապետել համապատասխան հարկային կամ պետական այլ մարմինները: Ուստի ԿԸՀ-ն նման խնդրանքով պետք է դիմի այդ մարմիններին: Սակայն, օրենքից պարզ չէ, թե արդյոք այդ տվյալները ճշտելու համար ԿԸՀ-ն իրականացնու՞մ է արդյոք որոշ քայլեր:

Վերոնշյալ կարևոր նշանակություն ունի, քանի որ կեղծ տեղեկություններ ներկայացնելը հիմք է թեկնածուի գրանցումը անվավեր ճանաչելու համար: Ուստի անհրաժեշտ է հստակ սահմանել, որ ԿԸՀ-ն բոլոր դեպքերում ստուգում է այդ տվյալների ճշտությունը, որպեսզի տարբերակված մոտեցում չլինի:

Վերոնշյալ պարտադիր պահանջները բավարարելու դեպքում միայն անձը կարող է ձեռք բերել համապատասխան թեկնածուի կարգավիճակ՝ դրանով իսկ ձեռք բերելով որոշակի իրավունքներ և պարտականություններ:

«Պատգամավորության թեկնածուի կարգավիճակը՝ դա նրա իրավունքների, պարտականությունների և գործունեության երաշխիքների ամբողջությունն է»¹⁹:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում թեկնածուներին ներկայացվող պահանջների առումով դեռևս առկա են շատ խնդիրներ, որոնց արդյունավետ լուծումը կարևոր նշանակություն ունի, քանի որ դրանից է մեծապես կախված անձանց պասիվ ընտրական իրավունքի անարգել իրացման հնարավորությունը:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն (05.07.1995թ.):
2. ՀՀ ընտրական օրենսգրք, օրենք N ՀՕ-284, ընդունվել է՝ 05.02.1999թ., ուժի մեջ է մտել՝ 28.02.1999թ., ՀՀ ՊՏ 1999.02.18/2(68):
3. «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք, N ՀՕ-419-Ն, ընդունվել է՝ 24.09.2002թ., ուժի մեջ է մտել՝ 31.10.2002թ. (ՀՀ ՊՏ 2002.10.30/46 (221) հոդ. 1062):
4. «Բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 1231-Ն, ընդունվել է՝ 14.07.2005թ., ուժի մեջ է մտել՝ 14.09.2005թ. (ՀՀ ՊՏ 2005.09.07/57(429) հոդ. 1112):
5. «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 821, ընդունվել է՝ 25.12.1998թ., ուժի մեջ է մտել՝ 25.12.1998թ. (ՀՀ ՊՏ 1998.12.31/33(66)):
6. Постников А. Е. Избирательное право России. М.: ИНФРА:М-НОРМА, 1996.
7. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Ընտրությունների դիտորդական առաքելություն, Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրություններ (12 մայիսի, 2007թ.), Միջանկյալ հաշվետվություն 1, 21-28 մարտի, 2007:
8. Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ) և Վենետիկյան հանձնաժողով: Համատեղ առաջարկություններ Հայաստանի ընտրական օրենսդրության և ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգի մասին, Ստրասբուրգ, 17 դեկտեմբերի, 2003թ.:
9. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույց, Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրություններ (19 փետրվարի, 2008թ.), Վարչավա, 30 մայիսի, 2008թ.:
10. Document of the Copenhagen meeting of the conference on the human dimension of the CSCE, Copenhagen, 1990.
11. “Report on electoral law and electoral administration in Europe”, Synthesis study on recurrent challenges and problematic issues; European Commission for Democracy Through Law (Venice Commission); Adopted by the Council for Democratic Elections at its 17th meeting (Venice, 8-9 June 2006) and the Venice Commission at its 67th plenary session (Venice, 9-10 June 2006), Strasbourg, 12 June, 2006.
12. Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the Electoral Code of the Republic of Armenia as amended up to December 2007, Adopted by the Venice Commission at its 76th plenary session (Venice, 17-18 October, 2008), Strasbourg, 22 October, 2008.

13. Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 10th meeting (Venice, 9 October 2004) and the Venice Commission at its 61st plenary session (Venice, 3-4 December 2004), Strasbourg/Warsaw, 6 January, 2005.
14. Venice Commission and OSCE/ODIHR; Preliminary joint opinion on the revised draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 12th meeting (Venice, 10 March 2005) and the Venice Commission at its 62nd plenary session (Venice, 11-12 March 2005), Strasbourg/Warsaw, 30 March, 2005.
15. “Guidelines for reviewing a legal framework for elections”; OSCE/ODIHR, Warsaw, January, 2001.

¹ Տե՛ս “Report on electoral law and electoral administration in Europe”, Synthesis study on recurrent challenges and problematic issues; European Commission for Democracy Through Law (Venice Commission); Adopted by the Council for Democratic Elections at its 17th meeting (Venice, 8-9 June 2006) and the Venice Commission at its 67th plenary session (Venice, 9-10 June 2006), Strasbourg, 12 June, 2006, կետ 76:

² Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք, օրենք N ՀՕ-284, ընդունվել է՝ 05.02.1999թ., ուժի մեջ է մտել՝ 28.02.1999թ., ՀՀՊՏ 1999.02.18/2(68):

³ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույց, Հայաստանի Հանրապետության մախազահական ընտրություններ (19 փետրվարի, 2008թ.), Վարչապետ, 30 մայիսի, 2008թ., էջ 9, գլուխ «VII»:

⁴ Տե՛ս Document of the Copenhagen meeting of the conference on the human dimension of the CSCE, Copenhagen, 1990, կետ 7.3:

⁵ Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the Electoral Code of the Republic of Armenia as amended up to December 2007, Adopted by the Venice Commission at its 76th plenary session (Venice, 17-18 October, 2008), Strasbourg, 22 October, 2008, էջ 8, կետ 29:

⁶ Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ; Ընտրությունների դիտորդական առաքելություն, Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրություններ (12 մայիսի, 2007թ.), Միջանկյալ հաշվետվություն 1, 21-28 մարտի, 2007, էջ 4, գլուխ «Գ»:

⁷ Տե՛ս Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ) և Վենետիկյան հանձնաժողով; Համատեղ առաջարկություններ Հայաստանի ընտրական օրենսդրության և ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգի մասին, Ստրասբուրգ, 17 դեկտեմբերի, 2003թ., էջ 7, կետ 17:

⁸ Տե՛ս «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք, N ՀՕ-419-Ն, ընդունվել է՝ 24.09.2002թ., ուժի մեջ է մտել՝ 31.10.2002թ., (ՀՀՊՏ 2002.10.30/46(221) հոդ.1062):

⁹ Տե՛ս «Բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 1231-Ն, ընդունվել է՝ 14.07.2005թ., ուժի մեջ է մտել՝ 14.09.2005թ., (ՀՀՊՏ 2005.09.07/57(429) հոդ. 1112):

¹⁰ Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 821, ընդունվել է՝ 25.12.1998թ., ուժի մեջ է մտել՝ 25.12.1998թ., (ՀՀՊՏ 1998.12.31/33(66)):

¹¹ Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 10th meeting (Venice, 9 October 2004) and the Venice Commission at its 61st plenary session (Venice, 3-4 December 2004), Strasbourg/Warsaw, 6 January, 2005, էջ 4, կետ 15:

¹² Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the Electoral Code of the Republic of Armenia as amended up to December 2007, Adopted by the Venice Commission at its 76th plenary session (Venice, 17-18 October, 2008), Strasbourg, 22 October, 2008, էջ 7, կետ 28:

¹³ Տե՛ս “Report on electoral law and electoral administration in Europe”, Synthesis study on recurrent challenges and problematic issues; European Commission for Democracy Through Law (Venice Commission); Adopted by the Council for Democratic Elections at its 17th meeting (Venice, 8-9 June 2006) and the Venice Commission at its 67th plenary session (Venice, 9-10 June 2006), Strasbourg, 12 June, 2006, կետ 85:

¹⁴ Տե՛ս “Guidelines for reviewing a legal framework for elections”; OSCE/ODIHR, Warsaw, January, 2001, էջ 16, գլուխ «B»:

¹⁵ Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Preliminary joint opinion on the revised draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 12th meeting (Venice, 10 March 2005) and the Venice Commission at its 62nd plenary session (Venice, 11-12 March 2005), Strasbourg/Warsaw, 30 March, 2005, էջ 6, կետ 17:

¹⁶ Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Joint opinion on the draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 10th meeting (Venice, 9 October 2004) and the Venice Commission at its 61st plenary session (Venice, 3-4 December 2004), Strasbourg/Warsaw, 6 January, 2005, էջ 4, կետ 15 :

¹⁷ Տե՛ս “Guidelines for reviewing a legal framework for elections”; OSCE/ODIHR, Warsaw, January, 2001, էջ 16, գլուխ «B»:

¹⁸ Տե՛ս Venice Commission and OSCE/ODIHR; Preliminary joint opinion on the revised draft amendments to the Electoral Code of Armenia, Adopted by the Council for Democratic Elections at its 12th meeting (Venice, 10 March 2005) and the Venice Commission at its 62nd plenary session (Venice, 11-12 March 2005), Strasbourg/Warsaw, 30 March, 2005, էջ 6, կետ 19:

¹⁹ Տե՛ս Постников А. Е. Избирательное право России. М.: ИНФРА:М-НОРМА, 1996. С. 65.